# ԱԶԳԱՅԻՆ ԴԻՄԱԳԾԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԽՆԴԻՐԸ ԶՄԻՒՌՆԻԱՅԻ «ԱՇԽԱՏԱՆՔ» ՊԱՐԲԵՐԱԿԱՆԻ ԷՋԵՐՈՒՄ (1910-1915 թթ.)

Մարիամ Վ. Յովսէփեան

## ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

*Արեւմտեան Հայաստանում եւ Օսմանեան կայսրութեան հայաշատ բնակավայրերում տարուող պետական յատուկ մշակուած հայահալած քաղաքականութեան պայմաններում հայութեան համար առաջնահերթ խնդիր էր ազգային դիմագծի պահպանումը: Այդ նպատակին էին ծառայում ազգային-հոգեւոր, կրթական եւ մշակութային բոլոր կառոյցներն ու հաստատութիւնները: Այս գործընթացն ունէր իր իւրայատկութիւնները մասնաւորապէս զմիւռնիահայութեան կեանքում, ինչը պայմանաւորուած էր տուեալ գաղթօջախի ձեւաւորման եւ կենսապահովման առանձնայատկութիւններով[1]: Դրանում ի սկզբանէ սեփական կնիքն էր դրել տեղի հայկական մամուլը[2], որը փորձել էր հասարակական կարծիքի ձեւաւորման միջոցով հասնել յիշեալ հիմնահարցի լուծմանը: Դրան անմասն չէր մնացել նաեւ Զմիւռնիա քաղաքում 1910-1915 թուականներին հրատարակուած «Աշխատանք» պարբերականը: Այն լոյս է տեսել չորեքշաբթի եւ շաբաթ օրերին «Քեշիշեան» տպարանում: Հիմնական աշխատակիցները ժամանակի յայտնի հասարակակա-քաղաքական գործիչներն ու մտաւորականութեան ներկայացուցիչներն էին՝ Է. Ակնունին, Աւետիս Ահարոնեանը, Մկրտիչ Պարսամեանը, Մարզպետը, Համբարձում Համբարձումեանը, Վահէ Տիճեանը եւ այլք[3]: Պարբերականի տէրը եւ տնօրէնը Սեդրակ Թոքաճեանն էր:*

## «ԱՇԽԱՏԱՆՔ» ԹԵՐԹԻ ՄՏԱՀՈԳՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂՈՒՄ ՀԱՅԿԱԿԱՆ ԴԻՄԱԳԾԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ԿՐԹՕՋԱԽՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐՆ ԷԻՆ

*Յենուելով զմիւռնիահայ մամուլի աւանդոյթների վրայ, որոնք ձեւաւորուել էին դեռեւս 19-րդ դարի 40-ական թուականներից[4], «Աշխատանքը» դարձել էր դրանց շարունակողը եւ արծարծել էր մեր ժողովրդին յուզող տարաբնոյթ խնդիրներ, անդրադարձել էր իշխանութիւնների հայահալած գործելակերպին, արեւմտահայութեան հանդէպ թոյլ տրուող անիրաւութիւններին եւ թալանին, սոցիալական պայմաններով պայմանաւորուած արտագաղթին հայրենի բնակավայրերից, Հայկական հարցի զարգացումներին, ընթերցողների մշակութային հետաքրքրութիւններին եւ բազմաթիւ այլ հարցերի: Խմբագրակազմի համար այդ ամէնը կարծես դարձել էր հայեցի կրթութեան, ազգային աւանդոյթներին հաւատարիմ մնալու, հայութեան դիմագիծը պահպանելու, ներքին կեանքն առաւելապէս*

---

1 *Հայ պարբերական մամուլի պատմութիւն XVIII-XIX դարեր*, Կահիրէ, 2006, հտ. 1, էջ 155-156:

2 Ալբերտ Խառատեան, *Զմիւռնիայի և Էգեյանի առափնեակի հայկական այլ գաղթօջախները (XVI-XIX դ. I կէս)*, Երևան, 2022, էջ 425-429:

3 «Աշխատանք», Իզմիր, 1910, թիւ 11:

4 1908-1914 թուականներին Զմիւռնիայում և Կ. Պոլսում հրատարակուել է աւելի քան 120 պարբերական, իսկ Արևմտեան Հայաստանում ու Կիլիկիայում՝ շուրջ 30 թերթ և ամսագիր (տե՛ս *Հայ պարբերական մամուլի պատմութիւն 1900-1922*, Երևան, 2017, հտ. 2, էջ 213-214):

*ինքնուրոյն վարելու եւ հայ մնալու առաջնային նպատակին հասնելու միջոց:*

*Շեշտենք, որ այս թերթի դիմադիծը եւ որդեգրած քաղաքականութիւնը պայմանաւորուած էին հրատարակութեան ժամանակահատուածով, որն ընդգրկում էր 1908 թուականի երիտթուրքական յեղաշրջմանը եւ իշխանազաւթմանը յաջորդող տարիներից մինչեւ Հայոց ցեղասպանութեան սկզբնական փուլն ընկած շրջանը: Այդ տարիներին առերեւոյթ թոյլ էր տրուած նաեւ մամուլում արտայայտել տեսակէտներ ու կարծիքներ, ներկայացնել հանրային տրամադրութիւնները պետական կառոյցների գործունէութեան եւ ծրագրերի վերաբերեալ: Զպէտք է մոռանալ, որ միեւնոյն ժամանակ մամուլի նիւթերը, գրական ստեղծագործութիւններն անցնում էին գրաքննութեան ծանր մամլիչի տակով:*

*«Աշխատանքի» համար ռազմավարական նշանակութիւն ունէին ազգային դիմագծի պահպանման, աճող սերնդի հայեցի դաստիարակութեան եւ կրթութեան խնդիրները: Ընդ որում, խմբագրակազմը դրանք փոխկապակցուած էր համարում ու հայկական դիմագծին հաւատարիմ մնալու հարցերին անդրադառնում էր կրթադաստիարակչական թեմայի շրջանակում: Զկար որեւէ համար, որտեղ խմբագրութիւնն առնուազն երկու յօդուած չնուիրէր յիշեալ հարցերին: Անգամ 1915 թուականին Հայոց ցեղասպանութեան բուռն շրջանում թերթում դրանք կրկին առաջնային էին:*

*Ի տարբերութիւն ժամանակի արեւմտահայ այլ պարբերականների՝ «Աշխատանքը» քննարկում էր ոչ թէ ուսուցիչների ցածր աշխատավարձին կամ նիւթական անձուկ կացութեանն առնչուող խնդիրները, այլ ազգային կեանքում նրանց դերի ու պատասխանատուութեան հարցերը[5]: «Գաւառի ուսուցչութեան շուրջ» թղթակցութեան հեղինակ Վահէ Տիճեանի կարծիքով՝ մի շարք բնակավայրերում ուսուցչի կոչմանն անհամապատասխանութիւնն էր արեւմտահայ գաւառի ուսուցիչների արգահատելի դիրքի պատճառը[6]: «Դպրոցէն կերպով մը իյնալու վախէն ահաբեկ, չգէտ Թաղական կամ Ուսումնական խորհուրդներու եւ Հոգաբարձուներու բերանէն կախուող, քծնող ուսուցիչներու չափազանց շատ գոյութիւնը գաւառու մէջ ամենամեծ պատճառն է այս բարոյական ողբալի սնանկութէան»,- գրում էր Վ.Տիճեանը[7]: Զարեհ Գնունին իր ուղարկած թղթակցութեան մէջ տեղեկացնում էր, որ Էտիրնէի երկսեռ վարժարանի ուսուցիչների եւ տեսուչ Խօրթումեանի գործելակերպից ծնողներն այնքան դժգոհ էին, որ նրանց մեծ մասն իրենց երեխաներին տեղափոխում էր ուրիշ կրթօջախներ[8]: Ուսուցիչների մէջ կային նաեւ լրտեսութեամբ զբաղուող անձինք, որոնց դէմ ընդվզում էին աշակերտները: Տարսոնի թղթակից Խաչիկ Քարուկեանը գրում էր, որ տեղի հայկական քոլեճի ուսուցիչ Գեւորգ Տամլամեանը լրտեսի համբաւ ունէր, իսկ պատմութեան ու թուրքերէնի ուսուցիչ Սիմոն Քիւփելեանը դասաժամերին անարգում էր հայոց լեզուն եւ հայ գրականութիւնը[9]: Ուսուցիչ-ուսուցչուհիները, եթէ համարձակւում էին ընդվզել տիրող անառողջ մթնոլորտի, դպրոցներում կիրառուող կամայականութիւնների եւ անօրինութիւնների դէմ, ապա ենթարկւում էին անարգանքի ու հալածանքի: Ուսուցիչ բառը շատ վայրերում հոմանիշ էր համարւում հալածանքի եւ զրկանքի առարկայ բառերին[10]: «Աշխատանքը» բերում էր փաստեր, երբ ուսուցիչները*

5 «Աշխատանք», Իզմիր, 1913, թիւ 2:
6 Նոյն տեղում:
7 Նոյն տեղում:
8 Նոյն տեղում, 1910, 11 սեպտեմբեր:
9 Նոյն տեղում, 1911, 9 ապրիլ:
10 Նոյն տեղում, 1913, թիվ 2:

*պատժւում էին իրենց համարձակ պահուածքի համար[11]: Թերթը Զմիւռնիայի մէկից աւելի վարժարանների ու դպրոցների «ընկած» վիճակի համար պատասխանատու էր համարում հիմնականում Իզմիրի հոգեւոր առաջնորդ Մատթէոս Ինճեանին[12], ով, ըստ այդ հրապարակումների, ամէն ինչ անում էր, որ կրթօջախներից անձնական շահոյթ ունենար[13]:*

*Պարբերականի համար անընդունելի էր Հռիփսիմեան օրիորդաց վարժարանում սովորական դարձած այն երեւոյթը, որ աւարտական քննութիւնների ժամանակ աշակերտուհիներն իրարից արտագրում էին յանձնարարութիւնների պատասխանները: «Հռիփսիմեանը իր ամբողջ ուսուցչական կազմին մէջ մէկ հատիկ վարժուհի իսկ չունի՝ Իզմիրի համար զարգացած հայուհիներ պատրաստելու կարող»,- գրում էր «Աշխատանքը»՝ աւելացնելով, թէ կանանց դաստիարակութիւնը եւ կրթութիւնն այն ներուժ կռուաններն էին, որոնց վրայ բարձրանում էր ազգի գոյութեան վերնաշէնքը[14]:*

*Հայեցի դիմագծի պահպանման գործում ազգային կրթօջախների դերի արժեւորման տեսանկիւնից կարեւոր էր Մելքոն Յովսէփեանի «Մի ձեռքը ծափ չի տար. մանկավարժական հարցեր» երկմասանի յօդուածը[15]: Հեղինակն այդտեղ իրավիճակը շտկելու ուղիներ էր մատնանշում՝ գրելով, թէ դպրոցն, առանձին վերցրած, ոչինչ չէր կարող անել. «Մէկ ձեռքը ծափ չի տար, եւ անհրաժեշտ է ընտանիքի աջակցութիւնը»[16]: Ըստ այդմ՝ դպրոցը եւ ընտանիքը պէտք է ձեռք ձեռքի տային եւ միասին զբաղուէին երեխաների կրթութեան ու դաստիարակութեան գործով: «Աշխատանքը» նշում էր, որ կրթութիւնը ազգային դիմագիծը պահող կենսական անհրաժեշտութիւն էր հայութեան համար[17]: Ներկայացնում էր գաւառում յաջողութեան հասած ազգային վարժարանների օրինակներ, ի թիւս որոնց՝ Վանի Սանդուխտեան օրիորդաց դպրոցի 40-ամեայ փորձառութիւնը[18]: «Աշխատանքը» մինչեւ վերջին համարը անդրադարձել էր այս թեմային: Ասուածի վկայութիւնը 1915 թուականի դրեթէ բոլոր համարներում առկայ վերլուծական յօդուածներն էին:*

*Ներկայացուած հիմնախնդիրներին զուգահեռ՝ «Աշխատանքը» փորձում էր հրապարակումների միջոցով բացատրել, որ ազգային լիարժէք կրթութիւն ստանալու եւ հայկականութիւնը պահելու համար անհրաժեշտ էր բարեփոխել երկրի սոցիալ-տնտեսական ու քաղաքական պայմանները: «Հայ ժողովուրդը ենթարկուած է քաղաքական անլուր ճնշումներու, հայահալած ու ջնջող վարչութեան մը, իրաւազրկութէան ամենէն դեհիկ տեսակին, ասոնք մէկ կողմէն, իսկ միւս կողմէն քրդական զինուած հրոսակներու դէմ ան կանգնած է բոլորովին անպաշտպան եւ անզէն»,- գրում էր պարբերականը[19]: Դիմում էր նաեւ ընթերցողներին, որ նրանք գործադրէին բոլոր միջոցները՝ հայրենիքը չլքելու եւ ազգային դիմագիծը պահպանելու համար:*

---

11 Նոյն տեղում:

12 Մատթէոս ծայրագոյն վարդապետ Ինճեանը ծնուել էր 1878 թուականին Կ.Պոլսում: Նախնական կրթութիւնն ստացել էր պատրիարքարանի, ապա Ղալաթիայի ազգային կենտրոնական վարժարաններում: 1904 թուականին նա դոկտորի աստիճանով ավարտել էր Փարիզի իրաւաբանական համալսարանը: 1909 թուականին ձեռնադրուել էր կուսակրօն աբեղա՝ հետագայում դառնալով ծայրագոյն վարդապետ (տե՛ս *Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան*, գիրք Ը, Երեւան, 2001, էջ 951):

13 «Աշխատանք», Իզմիր, 1913, թիւ 3:

14 Նոյն տեղում, 1913, թիվ 5:

15 Նոյն տեղում, 1913, թիւ 25, 26:

16 Նոյն տեղում, 1913, թիւ 26:

17 Նոյն տեղում, 1914, թիւ 55:

18 Նոյն տեղում, 1914, թիվ 52:

19 Նոյն տեղում, 1914, թիւ 52:

## «ԱՇԽԱՏԱՆՔԸ»՝ ՀԱՅԵՑԻ ԴԻՄԱԳԾԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԽՄԲՄԱՆ ԵՒ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ

*Թերթն անդրադարձել էր արտագաղթի եւ բնօրրանի դատարկման կործանարար հետեւանքների դէմ պայքարելու նպատակով 1913 թուականի ամռան վերջին Զմիւռնիայի հայ քաղաքական երեք կուսակցութիւնների («Դաշնակցութեան Իզմիրի Կոմիտէի, Հնչակեան Իզմիրի մասնաճիւղի, Սահմանադիր-ռամկավար ակումբի»[20]) մի շարք խորհրդակցական ժողովներից յետոյ ստեղծուած միջկուսակցական համերաշխութեան մարմնի՝ «Հայկական դատի շուրջ միասնաբար պայքարելու համար»[21] իրականացուող աշխատանքներին: Նրանք դա հիմնաւորում էին «քաղաքական ներկայ բացառիկ կացութեամբ եւ մանաւանդ խրատուած այն դառն փորձերէն, որոնք անցեալին մէջ այնքան ոյժեր վատնել տուին»[22]:*

*«Աշխատանքը» տպագրել էր Իզմիրահայութեան համերաշխութեան մարմնի ծրագիրը[23], որտեղ մանրամասն շարադրուած էին նաեւ այդ կառոյցի նպատակները: Յիշեալ մարմինը ձգտելու էր հաշտարար եղանակով լուծել տարածաշրջանում ծագող ազգային վէճերը, նպաստել համերաշխութեան մթնոլորտի պահպանմանը եւ այդ կերպ օգտակար լինել ազգի կենսական շահերին[24]: Թերթը նաեւ լուսաբանել էր Զմիւռնիայի Միջկուսակցական համերաշխութեան մարմնի աշխատանքները: Հրապարակումներից պարզ էր դառնում, որ անպտուղ էին մնում ազգային ուժերը համախմբելու ջանքերը, եւ այդ կառոյցը դատապարտուած էր անգործութեան[25]:*

*«Աշխատանքը» անբարենպաստ եւ կործանարար էր համարում այդ իրավիճակը, քանզի գիտակցում էր, որ թէեւ Հայկական հարցի լուծման համար նպաստաւոր (միեւնոյն ժամանակ վտանգաւոր) պայմաններ էին ստեղծուել, բայց կառավարող «Իթթիհատ վէ թերագգ» կուսակցութիւնը չէր հանդուրժում այլախոհութիւնը եւ ազգերի ինքնավարութիւնը, առաջնորդւում էր «միատիրական անյագ ախորժակով»[26]: Յօդուածներից մէկում հայութեանը կոչ էր արւում լինել աչալուրջ[27], որովհետեւ բարդ էր Հայկական հարցի լուծման գործընթացը. տարբեր պետութիւններ այստեղ հետապնդում էին իրենց շահերը: Յօդուածագրի կարծիքով՝ հայ ժողովրդին մնում էր ապաւինել իր իսկ ուժերին եւ ինքնօգնութեան դիմել[28]: Է. Ակնունին, օրինակ, հայ հանրութեան ուշադրութիւնը հրաւիրում էր մտահոգիչ այն հանգամանքների վրայ, որոնք բարդացնում էին Հայկական հարցի լուծման գործընթացը եւ խանգարում էին սեփական հայրենիքում հայ մնալուն: «Այժմ մի կողմից թիւրքական սահմանների նւազեցումը եւ պետական քաղաքականութէան ձախողանքը, իսկ միւս կողմից եւրոպական շահերի նոր դասաւորումը հայկական դատը դարձրել են օրուան մեծ խնդիրը, այն կեդրոնական կէտը, դէպի որը իր հայեացքն է սեւեռած ոչ միայն հարեւան Ռուսիան, այլեւ հեռաւոր Գերմանիան, մի հարց, որ իր համեստութեամբն հանդերձ՝ եւրոպական շահերը չօշափելու գաղտնիքն ունի»,- կարծում էր Ակնունին[29]: Նա առաջարկում էր աշխարհաքաղաքական այդ կարեւոր ժամանակահատուածում ուժերը*

20 Նոյն տեղում, 1913, թիւ 19:
21 Նոյն տեղում:
22 Նոյն տեղում:
23 Նոյն տեղում, 1913, թիւ 28:
24 Նոյն տեղում:
25 Նոյն տեղում, 1913, թիւ 23:
26 Նոյն տեղում, 1913, թիւ 25:
27 Նոյն տեղում, 1913, թիւ 29:
28 Նոյն տեղում:
29 Նոյն տեղում, 1913, թիւ 17:

չվատնել մանր-մունր կենցաղային խնդիրների վրայ, այլ՝ համախմբուել եւ միասնաբար գործել[30]:

Թերթում ազգային համախմբման անհրաժեշտութիւնը յատկապէս շեշտուում էր՝ 1913 թուականի կէսերից սկսած: Բերենք բնորոշ օրինակ: «Երեսփոխանական ընտրութիւնները եւ հայերը» հարցազրոյցում[31] Է. Ակնունին Տիգրան Զաւէնի հետ քննարկում էր Պատրիարքարանի՝ Բ. Դուռ ներկայացրած թագրիրում երեսփոխանական ընտրութիւնների վերաբերեալ արեւմտահայութեան պահանջները. «Մենք պահանջած էինք համեմատական ներկայացուցչութիւն եւ հայ երեսփոխաններու ընտրութիւնը հայ ժողովուրդին կողմէն: Կառավարական կուսակցութիւնը հայերու թիւին համաձայն երեսփոխաններ չկրնալով ապահովել, ատոր պատասխանատուութիւնը ձգած է իսլամ ընտրողներուն վրայ: Այս դէպքում ցնորք մը պիտի ըլլայ ընտրական իրաւունքը»,- փաստում էր Ակնունին[32]: Նա իրաւացիօրէն պնդում էր, որ Իթթիհատի կողմից նշանակուած հայ երեսփոխանները կը լինէին ա՛յդ կուսակցութեան եւ ոչ թէ հայ ժողովրդի ներկայացուցիչները Օսմանեան Թուրքիայի խորհրդարանում: Բնական էր, որ հայերը պահանջում էին իրենց ձայներով կատարել հայ պատգամաւորների ընտրութիւնը: Քանի որ Թուրքիայում 1913 թուականին մէկ երեսփոխանը 50.000 անձի ներկայացուցիչն էր, իսկ «Աշխատանքի» տուեալներով՝ այդ օրերին այդ երկրում 2.000.000 հայ էր ապրում, հայերը պահանջում էին քսան երեսփոխան օսմանեան խորհրդարանի համար[33]:

Արեւմտահայութիւնն իր քաղաքական պայքարը կազմակերպել էր քաղաքակիրթ եղանակներով, այն է՝ խորհրդարանում հայ պատգամաւորներ ունենալու նպատակով թուրքական կուսակցութիւնների հետ համագործակցելու եւ տարածաշրջանում հետաքրքրութիւններ ունեցող պետութիւնների հետ բանակցելու միջոցով: Անգամ պայքարի այս ճանապարհն արեւմտահայութեան դէմ աւելի էր դրդռել թուրքական իշխանութիւններին, որոնք 1913-1914 թուականներին արդէն բացայայտ կերպով սկսել էին սպառնալ հայերին, ընդ որում՝ ոչ միայն խօսքով, այլեւ կոնկրէտ ջարդերով: «Աշխատանքում» այդ կարգի սպառնալիքների բազմաթիւ օրինակներ կային: Օրինակ՝ Թերթի Վանի թղթակից Ա. Հրահատը տեղեկացնում էր, որ Հայոց ձորի Անգղ գիւղի մօտակայքում երկու հայի եւ երկու քրդի միջեւ ծագած վիճուած միջադէպից յետոյ թուրք ոստիկանները ազատ էին արձակել քրդերին եւ ձերբակալել էին ոչ միայն այդ երկու հային, այլեւ Անգղ գիւղի եւս տասնեօթ հայ բնակիչների: Երբ անգղցիները բողոքով դիմել էին Հայոց ձորի թուրք միւտիրին, նա պատասխանել էր սպառնալիքով. «Հայե՛ր, ձեր բոլոր ջանքն է, որ Ռուսիան միջամտէ, բայց դիտցէ՛ք, որ այդ պարագային ձեզմէ ոչ մէկը ողջ չպիտի թողունք»[34]:

Խուճապի մթնոլորտ էր տիրում Արեւմտեան Հայաստանում՝ 1913 թուականի վերջերից սկսած: Թերթը վկայում էր, թէ ինչպէս էին արեւմտահայերը «գլուխն առած՝ խուճապով խոյս տալիս հայրենի աշխարհից»[35]: Հայրենիքը ճգնաժամի մէջ էր, իսկ նրանք հեռանում էին, լքում էին հայրենի աշխարհը, երբ անհրաժեշտ էր համախմբել ուժերը. այսպէս էր կարծում յօդուածի հեղինակ Տարագիրը: Նա համոզուած էր, որ այս դէպքում հայրենիքն իրաւունք ունէր ասելու. «Փախէք դուք, բո-

30 Նոյն տեղում:

31 Այս յօդուածն «Աշխատանքը» արտատպել էր Կ. Պոլսի՝ ֆրանսերէնով հրատարակուող «Ստամբուլ» օրաթերթից (տե՛ս «Աշխատանք», Իզմիր, 1913, թիւ 46):

32 Նոյն տեղում:

33 Նոյն տեղում:

34 Նոյն տեղում, 1913, թիւ 15:

35 Նոյն տեղում, 1913, թիւ 20:

*լոր անարիներդ, բոլոր վատերդ: Հայ աշխարհի փրկութեան մէջ դուք դեր չունիք: Փախէ՛ք, միայն զգոյշ, մի՛ անցէք այն նուիրական վայրերով, ուր հանգչում են Պետոներն ու Մարտիկները, Աւետիսեաններն ու Վազգէնները, Սերոբ ու Գէորգ Զաուշ, Արաբօ ու Տարօնի Առիւծ Սերոբ իր զոյգ կորիւններով ու բոլոր նրանք՝ անյայտ ու յայտնի, որոնք մի օր ընկան ձեզ համար, ձեր ճակատից ստրկութեան ամօթը, ձեր թիկունքից բռնութեան անարգ բեռը վերցնելու համար»[36]: Հայրենիքը ծանր պահին լքողներին Տարագիրը դասալիք էր համարում: Միեւնոյն ժամանակ «Արտագաղթի առիթով» յօդուածում է. Ակունին դիմում էր տարագրուած հայերին. «Հայրենիքը ձեզ է սպասում, վերադարձէք: Դարձը կեանքն է Վաթանի, փախը՝ սկիզբը նրա մահուան»[37]: Քաղաքական նման հայեացքներ ունեցող խմբագրակազմը, պարզ է, որ 1915 թուականին նոյնպէս պիտի շարունակէր պնդել, թէ հայրենիքը չպիտի լքել, եթէ այնտեղից թուրքական իշխանութիւնները քեզ բռնի չէին տեղահանել կամ կոտորել:*

*1915 թուականին «Աշխատանքը» կոչ էր անում Զմիւռնիայի գաւառի բնակիչներին օգնել Հայոց ցեղասպանութիւնից մազապուրծ եղած իրենց հայրենակիցներին ամէն տեսակէտով: Յօդուածներից մէկում նշւում էր, որ Իզմիրի «Ազգատխնամ» կազմակերպութիւնը չէր մտածում օգնութեան ձեռք մեկնել գաւառի հեռաւոր անկիւններում թաքնուող անտէր-անտիրական հայերին, որոնցից շատերը մի կերպ գոյատեւում էին սարերում ու ձորերում[38]: «Զո՞վ մեղադրենք» հարցով էր «Աշխատանքը» դիմում ընթերցողներին՝ ներկայացնելով նրանց անտարբերութիւնը եւ խստասրտութիւնը, քանի որ մի կտոր հաց չէին տալիս սոված որբերին ու այրիներին[39]:*

*«Աշխատանքը» մինչեւ 1915 թուականի՝ մեզ հասած վերջին համարները բարձրացրել էր ազգային դիմագիծը չկորցնելու եւ բռնազաւթուած հայրենիքում հայ մնալու խնդիրները:*

*Ամփոփելով՝ կարելի է փաստել հետեւեալը.*

- *Զմիւռնիայի «Աշխատանք» պարբերականն իր հրատարակութեան ողջ ընթացքում բարձրաձայնել էր ազգային միասնութեան անհրաժեշտութեան մասին՝ այն դիտարկելով իբրեւ օսմանեան տէրութեան մէջ հայկական դիմագծի ու հայապահպանութեան հիմնական եւ անհրաժեշտ միջոց,*
- *Թերթը ողջունել էր 1913 թուականին Զմիւռնիայում գործող հայ աւանդական կուսակցութիւնների մասնաճիւղերի միասնական գործելու նախաձեռնութիւնը, թէեւ շուտով արձանագրել էր գործնականում դրա ձախողման փաստը, ինչը կործանարար էր համարել հայութեան համար ստեղծուած աշխարհաքաղաքական անբարենպաստ ու ցեղասպանութեան վտանգով լի պայմաններում,*
- *Պարբերականն առաւելապէս ազգային կրթութիւնն էր համարել հայեցի դիմագիծը չկորցնելու կռուան, ինչով էլ պայմանաւորուած էր եղել խմբագրակազմի առանձնակի մօտեցումը այդ թեմայի նկատմամբ,*

*«Աշխատանքի» վերլուծական յօդուածներում եւ խմբագրականներում երբեմն տրուել էին ծայրայեղ գնահատականներ՝ դրանցում բարձրացուող համահայկական եւ ներհամայնքային խնդիրների վերաբերեալ, թէեւ պէտք է փաստել, որ հիմնականում արդարացուած ու փաստարկուած էին առաւելապէս չէզոք դիրքորոշումներ որդեգրած այս պարբերականի*

36 Նոյն տեղում:

37 Նոյն տեղում, 1913, թիւ 21:

38 Նոյն տեղում, 1915, թիւ 96:

39 Նոյն տեղում:

*մտահոգութիւնները մասնաւորապէս ազգային դիմագծի պահպանման առումով:*

Գրականութեան եւ մամուլի ցանկ

**Ալբերտ Խառատեան,** *Զմիւռնիայի եւ Էգեյեանի առափնեակի հայկական այլ գաղթօջախները (XVI-XIX դ. I կէս)*, Երեւան, 2022, ԳԱԱ «Գիտութիւն» հրատ. , 533 էջ:

*Հայ պարբերական մամուլի պատմութիւն XVIII-XIX դարեր*, Կահիրէ, 2006, 701 էջ:

*Հայ պարբերական մամուլի պատմութիւն 1900-1922*, հտ. 2, Երեւան, 2017, ԳԱԱ պատմութեան ինստիտուտի հրատ. , 786 էջ:

*Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան*, գիրք 8, Երեւան, 2001, «Հայաստան» հրատ. , 972 էջ:

«Աշխատանք», Իզմիր, 1910, թիւ 11, 1913, թիւ 2, 3, 5, 15, 17, 19, 20, 21, 23, 25, 26, 28, 29, 46, 1914, թիւ 52, 55, 1915, թիւ 96: